

ԿՐՁՆԵԿԱՆ—ԲԵՐՈՅԵԿԱՆ

ԻՄԱՍՏՈՒՆԻ ԸՆԾԱՆԵՐԸ

Յաւի ու արտասուքի ծով էր աշխարհը, երբ Բեթ-դեհէմի այրում մանուկ Յիսուսը ծնուեց:

Հէնց այդ օրերումն էլ հեռու արեւելքում իրմեծութեամբ ու պայծառութեամբ դեռ չը տեսնուած մի տառղ երևաց: Ժամանակի իմաստունները—ժողերը այս երևոյթը վաղուց անձկանօք սպասուող Փրկչի ծննդեան նշան համարեցին ու պատրաստուեցին նրան երկրպագութիւն դնալու:

Ճանապարհները վտանգաւոր էին, պէտք էր քարոսան կազմակերպել: Արեւելքի շատ երկրներում այժմ էլ այդպէս է:

Դնալու պատրաստութիւն տեսաւ նաև Պարսկաստանի մեծ իմաստուն Արտաբանը: Իր ունեցած ահադին կալուածները ծախծխեց ու երեք թանկագին քար ձեռք բերեց: Մտածում էր այդ քարերն և իր ջերմ ու անխորհալս սիրով լի սիրտը նուիրարեքել ճշմարտութեան ու բարութեան նորածին Թագաւորին:

Նա շտապեց քարուանին միանալու: Մինչև ժամադրաւայրը մի քանի օրւայ ճանապարհ էր, բայց ոչինչ... նրա ձին սրարշաւ էր և ուժեղ: Վերջին օրն Արտաբանը որոշեց զիշերն էլ գնալ: Արեւելքի մեղմ քամին հովութիւն էր տարածում: Ասածու զահոյկի առաջ պայծառ վառուող կանթեղի պէս փայլում էր նոր աստղը:

—Արքարութիւնը երկնքիցն է գալիս, աստղը դրա նշանն է. յառաջ, իմ հաւատարիմ երիվար, արագացրո՛ւ քայլերդ, մօտ է փրկութիւնը:

Ջին արագ էր քայլում. շրջակայ անդորրութեան մէջ լսում էր նրա սմբակների զովիւնը. խաւարը հետզհետէ փարատւում էր, տեղ-տեղ լսում էր նոր արթնացող թռչունների ճռռողիւնը. մօտենում էր լուսարացը:

Յանկարծ ձին կանգ առաւ, փոնչաց ու ետ-ետ քաշ-
ւեց: Արտարանը ձիուց իջաւ, տեսողութիւնը լարեց: Զիու-
հէնց օտների առաջ փռուած էր այդ կողմերին յատուկ
սարսափելի տենդից ուժասպառ եղած մի հրէայ: Միայն
հիւանդի չորացած ու այրուած շրթունքներից երբեմն
թռչող հառաչանքն էր, որ նրա դեռ կենդանի լինելն էր
վկայում:

— Ընկերներից ետ չը մնալու համար անտարբեր անց-
նել ու գնալ—դէմ է խղճիս, մնալ, խնամել սրան՝ նոյն-
պէս չեմ կարող, որովհետեւ քարուանից կուշանամ: Ըն-
կերներս տուանց ինձ կերթան: Բայց աւելի լաւ է գնամ:
Վճռեց Արտարանն ու նոյն իսկ ոտն ասպանդակում դրաւ:
Հիւանդն զգաց, որ իրենից հեռանում է վերջին յոյսը և
այնպիսի դառն «ա՛խ» քաշեց, որ իմաստունի սիրտը կսկծաց:

— Մի մեծ արդարութիւն, բացականչեց նա, դու
լաւ գիտես, թէ հոգիս ինչ թափով է ձգում գէպի քեզ-
ցոյց տուր ինձ՝ ինչ անեմ, ինչպէս վարուեմ: Արդեօք քո
ձայնը չէ, որ խօսում է կրծքիս տակ ու հրամայում է
օգնել այս թշուառին:

Ասաց ու մօտեցաւ հիւանդին, կոճակներն արձակեց,
մօտիկ աղբիւրից ջուր բերելով, զովացրեց նրան, թումրի
տակից ինչ որ դեղեր հանելով խառնեց գինու հետ ու
խմացրեց. տրորեց կուրծքն ու ձեռները: Այսպէս մի
քանի ժամ:

Լոյսը վաղուց էր բացուել. արեւն այրում էր, կէ-
սօրը մօտենում էր, Հիւանդն ուշքի եկաւ, օտի կանգնեց
ու չը դիտէր՝ ինչպէս շնորհակալ լինել:

— Մի ես դու, հարցրեց նա, ասա՛, ես և իմ ըն-
տանիքն եւմ համար պիտի աղօթենք. ինչե՞ւ ես տխուր
ինչ ցաւ ունեւ սրտումդ:

Արտարանը կարճ կերպով պատմեց ո՛վ լինելը և ո՛ւր
գնալը:

— Ընկերներս, ի հարկէ, արդէն գնացած կը լինին,
իսկ ես մնացի. էլ չեմ տեսնիլ ճշմարտութեան թագա-
ւորին:

Հրէայի դէմքն ուրախութիւնից փայլեց.

— Թող հոգիդ խաղաղ մնայ, ասաց նա, մեր սրբազան զրքերն ասում են, թէ այդ թագաւորը Բեթղեհէմում պիտի ծնուի. զնա այդ քաղաքը և փնտռածիդ կը գտնեն:

Մենակ ճանապարհը շարունակել անկարելի էր: Պէտք էր ուշտեր վարձել, ջուր և զինուած մարդիկ վերցնել: Արտաբանը չը տխրեց, վերադարձաւ տուն, քարերից մինը ծախեց, նոր քարւան կաղմեց ու ճանապարհ ընկաւ:

Ահա և Բեթղեհէմը:

Նա՝ հոգնած, փոշոտած բայց բազդաւոր, մօակեցաւ առաջին տնակին, ու ներս մտաւ տան տիրուհուն հարցակոխ արաւ.

— Արդեօք այս օրերում այստեղ, ձեր քաղաքում արեւելքից օտարականներ չեն եղել. ո՞ւմ գիմեցին և ի՞րտեղ են այժմ:

— Ինչպէս չէ, պատասխանեց երիտասարդ տանտիրուհին, որ նստած ծիծ էր տալիս երեխային, մի քանի օր առաջ ինչ որ օտարականներ եկան, նրանք նաղարէթի Մարիամի մանկանն էին փնտռում. ո՞ւր են այժմ՝ չը զիտեմ. ասում են՝ ծնողները նորածնին եզիպտոս են փախցրել, որովհետեւ մեր թագաւորն ուղեցել է սպանել նրան:

Արտաբանն իր անելիքը դեռ չը վճռած, յանկարծ փողոցից սարսափելի աղմուկներ լսեց. բակն ընկաւ կիսամերկ ու սարսափահար մի կին ու բացականչեց.

— Դիտներիդ ճարը տեսէք. Հերովդէսի զինուորները կոտորում են մեր երեխաներին:

Երիտասարդ տանտիրուհու դէմքը դունատուեց. աչքերի թերթերը լայնացան. կրծքին սեղմեց զաւակին ու դարձաւ Արտաբանին.

— Փրկիր, փրկիր զաւակիս, Աստուած էլ քեզ կը փրկի:

Արտաբանն շտապեց դէպի դուռը, ուր կանգնած էր զօրամասի զլխաւորը. նրանից քիչ հեռու իրենց սրբը անմեղ մանուկների արիւնով ներկած զինուորներն էին: Արտաբանն ակամայ ձեռքը ծոցը տարաւ, հանեց երկրորդ

Թանկագին քարն ու տալով զլիաւորին ասաց.

— Ստացիր այս Թանկագին քարն ու հեռացիր այստեղից:

Գլխաւորը որ իր կեանքում այսպիսի հարստութիւն չէր տեսել, ազահուածեամբ լիեց քարն ու հեռացրեց զինւորներին՝ մի այլ տեղ շարունակելու իր բառմեղի գործը: Կինը ծունկ չոքեց նրա առաջ և սրտի խորքից եկող ճայնով ասաց.

— Թող Աստուած օրհնէ եկած ճանապարհդ. դու փնտռում ես Արդարութեան, Սիրոյ և ճշմարտութեան Թագաւորին. արժանանա՛ւ... Թող նա էլ քեզ նոյնպիսի սիրով նայէ, որպիսի սիրով այժմ ես եմ քեզ նայում:

Արտաբանն զգուշութեամբ բարձրացրեց նրան. արտասուքի խոշոր կաթիլներ զլորուեցին նրա երեսի վրայով — «Ո՛վ Մեծ ճշմարտութիւն, ներիր ինձ. այս կնոջ ու սրա զաւակի սատճառով ես Քեզ համար նշանակած քարերից մինն էլ ծախեցի. կարժանանամ արդեօք երեսիդ: Այստեղ էլ ուշացայ. ետեկիցը եղիպտոս եմ դալիս»:

Ծանօթ Թափառեց խեղճը. շատ երկիրներ անցաւ, բազմութիւ լեղուններ լսեց, սակայն փնտռած Թագաւորին չը գտաւ: Ծանօտ տեղ նրա սիրտը կսկծաց, շատ արտասուք Թափեց. «Տէր, մտածում էր նա, որքան Թշուառութիւն, վիշտ ու տանջանք կայ աշխարհում. երբ պիտի երեւաս մարդկանց ու Թեթեացնես նրանց վիշտը»:

Ինքն ինչ կարողանում՝ անում էր. — Բժշկում էր հիւանդներին, օգնում էր խեղճերին, մխիթարում էր սրբտով վշտացածներին, այցելում էր բանտարկեալներին: Վերջին քարը պահում էր աչքի լոյսի պէս, որ գոնէ այդ մինը նուիրարերէ նրան:

Տանից դուրս գալու օրից անցաւ ուղիով 33 տարի: Արտաբանը շատ փոխուեց. նրա մէջքը կռացաւ, մազերն սպիտակեցին, սակայն զէպի Փրկութեան Թագաւորն ունեցած սէրը սրտում աւելի էր բորբոքւում: Յանկարծ նա լսեց, որ Հրէաստանում մինը սքանչելի գործեր է կատարում. — մեռածներին, բարոյապէս ընկածներին կենդա-

նայնումն նոր կեանքի է հրաւիրում:

— Վերջապէս զայս Քեզ մտածեց իմաստունը:

Եկաւ Հրէաստան: Ահագին ժողովուրդ էր շտապում զէպի երուսաղէմ:

Չատիկ է. այնտեղ է և Յիսուսը: Արտաքանն էլ մտաւ երուսաղէմ: Նոր տեսարան. — Մարդիկ շտապում են զէպի մերձակայ բլուրներից մինը. նրանք վազում են, անհանգիստ, հե՛ի հե՛...:

— Այս ո՛ւր են շտապում, հարցրեց նա:

— Դէպի Գողգոթա, այնտեղ այսօր երկու աւաղակների հետ պիտի խաչեն Յիսուսին, որն իրեն Աստծու Որդի էր անուանում:

Արտաքանն ընկաւ երեսն ի վայր և դառն արտասուեց.

— Իարձեալ ուշացայ. Քեզ տեսնելու բազմին արժանի չեղայ. Քեզ չը ծառայեցի: Ասենք՝ զուցէ զեռ բոլորովին ուշ չէ. զուցէ զանեմ նրա Թշնամիներին ու երրորդ քարովս աղատեմ նրան:

Ասաց ու շտապեց զէպի Գողգոթա: Փողոցներից մի-նում նրա առաջն ելան մի խումբ զինւորներ, որոնք քաշէ քաշ զէպի բանտ էին տանում հազուադէպ զեղեցկութեան մի աղջիկ: Կոյսը իմաստունին տեսնելուն պէս հասկացաւ, որ իր հայրենիքից պիտի լինի, բռնեց փէշից ու զոչեց.

— Խղճա՛ և աղատիր ինձ. ես քեզ հայրենակից եմ: Հայրս այստեղ առևտուրի եկաւ, ինձ էլ հետը բերեց. ինքը հիւանդացաւ ու մեռաւ. այժմ նրա պարտքերի փոխարէն ինձ են ուզում վաճառել ու խայտառակել. աղաչում եմ — աղատիր:

Ոսկաց ծերունի մոզը, օգնելու զգացմունքը նորից բռնկուեց նրա սրտում. ի՞նչ անել. — պահէ՛լ արդեօք եր-րորդ քարը Մեծ Թագաւորի համար, թէ նրանով փրկել այս Թշուառին: Նա շատ երկար չը մտածեց. հանեց քարն ու տուաւ աղջկան.

— Ա՛ռ, փրկիր քեզ աղջիկս. երեսուներեք տարի աչ-քիս լոյսի պէս պահեցի Թագաւորիս համար. բայց կերևի թէ արժանի չեմ նրան:

Յանկարծ երկիրը դողաց, արևը խաւարեց, տները ճաք տուին, մօտակայ կաուրից մի քար ընկաւ և պատռեց խեղճ ձերունու պուխը. նա դետին փռուեց, աղջիկը վրայ ընկաւ օգնելու: Մերունու շրթունքները մրմնջում էին, աչքերն ուրախ փայլ էին ընդունել. դէմքը պայծառ էր. նա կարծես խօսում էր մինի հետ:

— Տէր, հազիւ լսելի ձայնով մրմնջում էր նա. ևս քեզ երբ քաղցած տեսայ, ու կերակրեցի. երբ ծարաւ դտայ ու խմացրի. երբ տուն ընդունեցի ու հազցրի: Երեսուններեք տարի է թափառում եմ քեզ զտնելու համար, սակայն չարժանացայ:

Մերունին լռեց. թեթեւ քամի փչեց ու անցաւ նրա վրայով և կարծես այդ թւերով բարձրից մի հաճելի ձայն եկաւ.

«Ճմարտն եմ ասում քեզ. ինչ որ կարօտեալներին ու թշուառներին արիր, միևնոյն է թէ ինձ արիր»:

Արտաբանի դէմքն աւելի ևս փայլեց. աչքերը դարձրեց դէպի երկինք ու յաւիտեան փակեց: Երկար տարուայ թափառումներն ու որոնումները վերջացան: Նա տեսաւ Փրկչին: Նրա ընծաներն ընդունուած էին:

Փարգմ. ռուսերէնից Յ. Բ. Աստիկեանց.

